


ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիելյան



ԽՐԻՍԵԱՆ ՀԱՅՐԻԿ
ՎԵՃ. ԿԱՐՈՂԱԿԱՆ ՍՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՑ



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
Կամ Redaction de la Revue "Haïk," ևն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք
Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Պատկեր Խրիմեան Հայրիկի — Վեհ. Խ-
րիմեան Հայրիկի քաղաքականութիւնն —
Դրան բարբարոսութիւնն և յեղափոխութեան
անհրաժեշտ հարկն — Հնչակեան Պատուիրակ
ի նիւ Եորք — Միմաս Զերագի ի նիւ Եորք —
Համառոտութիւն Միմաս Զերագի բանախո-
սութեան. — Ն. Կարապետեանի քննադատու-
թիւն Մ. Զերագի ճառին. — Նամակ Իսկէմ-
տէրումէ. — Ամերիկայի Հայերն բանին զին
կտրելով օգտակար կեցնին. — Դիտողութիւն
վերի Նամակին առթիւ. — Ամերիկայի Հայոց
քաղաքացութեան խնդիր. — Քաղաքական, Ազ-
գային և զանազան լուրեր.

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք նիւ Եորքի

76 E. 9th Փողոց

Պրատուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով : Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր :

Նեկայ թուոյ մէջ ընթերցողք պիտի գտնեն
ազգ. խնդրոյն վերայ Մեծայարգ փրոֆ.
Զերագի հրապարակախօսութիւնն զոր ա-
րաւ նիւ Եորքի մէջ Հայոց առջեւ : Պիտի
գտնեն նաև Մեծայարգ Տեառն Ն. Կարա-
պետեան յեղափոխական գործիչի քննա-
դատութիւնն, որ նոյնպէս Հայոց առջև կա-
տարուած է : Թէև մեք ընդարձակօրէն
գրի առած եմք երկուցն ևս խօսածներն,
տեղւոյ անձկութեան պատճառաւ կու-
տամք միայն համառոտութիւնն, իմաստից
ճշգրտութեան պատկառ կալով, առանց բա-
ռական ճշգրտութիւնն շատ յարգելու : Ու-
րախ եմք հրապարակաւ յայտարարելու
թէ, երկուքն ալ մեծ քաղաքավարու-
թեամբ խօսեցան և ունէ ամենաւարժեան
վերաւորիչ խօսքեր չարտարերեցին :
Պէտք է որ մեր ժողովուրդ վարժուի լսե-
լու անաչառ և ազնիւ վիճաբանութիւն
հրապարակային, քանի որ քաղաքային
կեանքի և քաղաքական կենցաղոյ հաս-
նելու հետամուտ է : Մեծ տիմարութիւն
է ընդդիմախօսութիւնն անձնական թշ-
նամութեան արդիւնք համարիլ :

Մեր յառաջիկայ թուով ընդհանուր
տեսութեամբ մի պիտի ցուցնեմք թէ եր-
կու հակաճառից ո՞րն ո՞ր կետերու մէջ ի-
րաւունք ունենալ կը թուի մեզ, զի թէ՛
միոյն և թէ՛ միւսոյն խօսածներուն մէջ
կան ըստ մեզ, բանաւոր և հաստատուն
փաստեր ինչպէս նաև վիճելի և սխալ
կարծիք :

* *

*

Վեհ. կաթողիկոսն ամենայն Հայոց,
Խրիմեան Հայրիկ, յերուսաղիմէ մեկնած է
չատունց և յէջմիածին հասնելուն լուրն ընդ
հուպ ստանալ կը յուսամք :

*

* *

ԿԱՆՈՒԱԾ ՀԻՆԳ ՀԱՅԵՐՆ ԵՆ

(1) Թորոս Ծառուկեան, Կիւրինցի, 25 տա-
րեկան. (2) Յովհաննէս Արզումանեան, Կե-
սարացի, 25 տարեկան. (3) Կիւլպէնկ Հա-
մալեան, Թալաացի, 20 տարեկան. (4) Մի-
րիճան Խանապախեան, Թալաացի, 24 տա-
րեկան. (5) Փանոս Եաղուպեան, Թալաացի,
30 տարեկան :

ՎԵՋ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

Մեծարելի խմբագրապետ,

Հայրենեաց ազատութեան կամ ինքնօրինութեան մասին ձեր ճարտար գրչի արդիւնք եղած ուսումնասիրութեանց մէջ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ վերնադրով յօդուածն արդարեւ արժան է յօդուածոց թագուհին անուանել: Որովհետեւ չի վարանեցաք յառաջ քան զայս բարեյիշատակ Ներսէս Պատրիարքի ֆաղաքականութիւնն հրապարակ հանել և միանգամայն այլոց ասպարէզ կարգաւ որ այս կենսական խնդրոյն վրայ գրեն ինչ որ բանաւոր և մեր ազգային դատին նըպաստաւոր ու փրկարար է, ուստի պարտ ու պատշաճ կը համարիմ աստ ՎեՋ. Հայրիկի գերազանց քաղաքականութեան այն էական կէտերուն վերայ հանուր ազգիս ուշադրութիւնն դարձնել կարճ ի կարճոյ:

Հայրիկի քաղաքականութիւնն հին տնտեսութեան մէջ յիշատակուած մի դիւցազնի քաղաքականութեանն, այն է Նէեմիայի, յոր և նման լինելով՝ բաղդատութեամբ պիտի բացատրեմ:

Իրացած էր Խորայէլ ժողովրդի գերադարձութեան պայմանաժամն որ ատեն Նէեմիայ Արտաշէս թագաւորէն հրաման ստացաւ Սիօնի պարիսպն վերականգնելու քանզի Բաբելոնի մէջ եղած գերիններուն հայրենիք վերադառնալու իղձն և պաղատանաց ձայնն Նէեմիայի միջոցաւ թագաւորին աւանջն հասաւ և հրամայեց Երուսաղեմայ պարիսպն վերաշինել և ապա ժողովրդին ազատութիւնն շնորհել, որպէս զի երթայ նորա ամրութեան մէջ ապահովութիւն վայելէ:

Այժմ Արարատեան աշխարհի գերագոյն արքայն ևս իւր հաւատարիմ ծառայի, Խրիմեան Հայրիկի բարեխօսութեամբն Հայկայ հարազատ որդւոց թշնամւոյն անտանելի լուծէն և նորա գերութեան չղթանքէն ազատուելու բաղձանքն ու ազաւանաց ձայնն լսելով՝ հրաման քաւ և իշխանութիւն ու արտօնութիւն շնորհեց իրեն որ իբր Հայրապետ ու ասպետ Հայրենի երկիրն վերադառնայ և Հայաստանի

փրատակ ու ամայի դարձած ամրութիւններն վերանորոգէ, այն է ժողովրդեան ոչ միայն արտաքին կամ ֆիզիքական, այլ և ներքին ու բարոյական ոյժ և զօրութիւն ներշնչէ, յորմէ կախեալ է Հայոց ազատութեան Ս. գործն:

Նէեմիայ թէև աքսորեալ մի գերի էր ի Բաբելոն, սակայն իւր անզուգական ճիւղերովն մեծամեծ պաշտօններու արժանացաւ և եղաւ մի բարձրաստիճան պաշտօնեայ, սակայն նա առաւել ընտրեց հայրենեաց երկրին մէջ իւր անկեղծ ժողովրդեան հետ տանջուիլ քան թէ արքա յական փառաւորութիւններ վայելլ: Երբ նա հայրենիք վերադարձաւ, գիշերանց իւր նժոյգին վերայ նստած աճապարեց Սիօնի պարիսպին փրատակներն աչքէ անցունել, յետոյ քննեց ժողովրդական վիճակն և աւանատես եղաւ գործին անհնարին դժուարութեանցն, թէ ինչպէս պիտի կարենայ հայրենեաց երկիրն գտնուող աղքատ, քիչւոր ու հարստահարեալ ժողովրդով Սիօնի փրատակաց ներքեւ խորունկ թաղուած ահագին քարերն անկատար գործիքներով փորել, վեր հանել, մէկդի գլորել, տաշել, ձեւի բերել իրարու վերայ յարմարցունել և այդ վիթխարի գործն ի գլուխ հանել: Բաց ի դժմանէ թշնամիք եղելութիւնն իմանալով՝ Նէեմիայի դէմ սկսան որոգայթ լարել: Նաև ժողովրդին մէջէն կաշառակեր մատնիչներ ու հմայողներ երևան ելան, որոնք կեղծ ու պատիւ մարդարեւութիւններ ընելով կը ջանային վհատեցունել զՆէեմիայ: Իսկ նա կ'աղօթէր և մեղուի պէս կը աշխատէր ու ժողովուրդն կը քաջալերէր, այնպէս որ իւր բարի ու առաքինի վարմունքովն հանրութեան սիրտն ու համակրութիւնն չափեցաւ:

Խրիմեան Հայրիկն ալ թէև թշնամւոյն լուծին ներքեւ գերի դարձած՝ սակայն իւր հիանալի բարեպաշտութեամբն ու խորին իմաստութեամբն և անխոնջ ու անձնուէր աշխատութեամբն եկեղեցական բարձր պաշտօններու արժանացաւ և վերջապէս իւր ժողովրդին միաժայն հաւանութեամբն ամենայն Հայոց կաթողիկոս անուանուեցաւ: Սակայն ինչ որ է սոխակին ոսկի թել վանդակն, նոյնն է Վասպուրական արծուոյն հայրապետական աթոռն, թագն ու պսակը: Հայրիկ ի վերուստ կոչում առած և ի վաղուց Արարատեան աշխարհի

ամբողջութիւններն աչքէ անցուցած, ժողովրդեան ամեն խաւերուն մէջ մտած ելած, նորա սրտամաշիկ ու աղետալի վիճակն լաւ ուսումնասիրած է, թէ եկեղեցական կարգապահութիւնք որ աստիճան իտանդարտուած, թէ ճշմարիտ ու իրական դատարարական գործն բոլորովին յետաձգուած, թէ կրօն, ազգութիւն, մայրենի լեզու, բարոյական կենցաղավարութիւն, միով բանիւ Հայութիւնն վերականգնող կենսական տարրներն ի հիմանց քայքայուած է: Բաց յայդմանէ ներսէն ու դրսէն զօրեղ թշնամիք խորամանկութեամբ կռահելով Հայրիկի դիտաւորութիւնն, մերթ շոգուրթութեամբ և հմայութեամբ և մերթ ընդ մերթ մահ սպառնալով ջանացին վհատեցունել: Սակայն այս անվեհեր անձնաւորութիւնն իւր կոչման հաւատարիմ ու անխախտ մնալով և իւր զգայուն սիրտն, խանդն ու եռանդն իւր հայրենեաց ու ազգի աղետալի տեսարանին վերայ առուել ևս բորբոքած՝ իւր պաշտօնին գլուխն անցաւ և առանց վարանելու Հայաստանի ամբողջեան վերանորոգմանը վերաբերեալ ամեն նախնական և կարելի եղած միջոցներուն ձեռք զարկաւ. ոչ հալածանք, ոչ սպառնալիք, ոչ մեծարանք ու չոլաբորթութիւնք կրցին զինքն կասեցնել և ոչ ալ իժերու թոյնն ու կարծններու խայթն կրցին զինքն մահացունել:

Նա հաստատեց Հայաստանի խորերը մամուլ, տպարան, ձուլարան, լրագիր և ուսումնարաններ, որպէս զի փութանալի հօտին հաւատարիմ հովիւներ, ընտանեաց արժանաւոր ծնողք, երկեսն մանկանց կարող դաստիարակներ և հայրենեաց անկեղծ ու ճշմարիտ հայրենասէրներ հասցունէ:

Շինութեան գործն լրանալու միջոցին ժողովրդեան կողմանէ նէեմիայի աղերսներ ու հարցումներ եղան, թէ ազատութեան փողն ե՞րբ պիտի հնչէ:

Նէեմիայ պատասխանեց: Քննեցէք գրքերն. երբ դուք լաւ միտք առնէք թէ ինչու աստուած իւր ընտրեալ ժողովուրդն երեսէ թողուց ու գերութեան մասնեց և երբ դուք մարգարէից խրատին հետեւիք ու ապաշխարէք, այն ատեն ազատութեան օրն պիտի գայ:

Որ ատեն Հայրիկին հարցունեցաւ թէ Հայերն ե՞րբ ազատութիւն պիտի վայելեն, Նա պատասխանեց ու ըսաւ. — «Լ՛Տէր Աստուած ցոյց կուտար մարգարէին

բերնով թէ կորուստ քո ի քէն է, Իսրայէլ: Իսկ եթէ տարակուսաբար հարցնես այս կորստեան սահման մինչև ե՞րբ է, մինչ եթանասուն ամ, այդ թիւը Բաբելոնի գերեաց ազատութեան սահմանն է, մինչև չո՞րս հարիւր ամ, ո՛չ այդ ևս անստոյգ է, հապա մինչև ե՞րբ, լուր և մարգարէանամ քեզ: Մինչև որ Աւետարանի պարզ դասերն սովորիս, մինչև որ քրիստոնէական ընկերակցութեան պարտիքներ ճանչես, մինչև որ մտաւորական տգիտութեան մութէն իւրոյս դաս, մինչև որ դաստիարակութիւն սիրես և բարոյական լուծին տակ պարանոցիդ խստութիւնը խոնարհի... ահա այն ատեն հայրենեաց ազատութեան փողն պիտի հնչուի:»

Արդեօք մինչև ո՞ր ատիճան կարեւորութիւն տրուեցաւ յիշեալ պատգամաւորութեան և կամ ով հետաքնին եղաւ այս ամենակարեւոր խնդրոյն որ է Հայրիկի քաղաքականութիւն և որ ազգային քաղաքականութեան կենսական մասն կը կազմէ: Ով որ ականջ ունի թող լսէ:

Ղ. Պ. ՉՈՓՈՒԹԵԱՆ

ԴՐԱՆ ԲՈՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆՆ

ԵՒ

ՅԵՂԱՓՈՆՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՐԿՆ

Վերջին տարիներս և մանաւանդ վերջին ամիսներս թուրք կառավարութիւնն այնպիսի զարհուրեցուցիչ կերպերով իւր բարբարոսութիւն արտահոսեց Հայոց վերայ որ ամեն քաղաքակիրթ արարած որ իրազեկ եղաւ այդ կերպերու՝ համոզուեցաւ թէ թուրք կառավարութիւնն չի կրքնար այլ ևս յարգուիլ իբրեւ կառավարութիւն:

Հայրենասէր կամ յեղափոխական չըլինելով իսկ՝ ամեն հայ որ «կառավարութիւն» բառին նշանակութիւնն ըմբռնելու չափ մտաւոր էակ է՝ պիտի ուրանայ մեզ հետ թուրք կառավարութեան գոյութիւնը:

Կառավարութիւն մի երկրին օրէնքներուն գործադրութեան կը հսկէ. իրաւանց բռնաբարիչներն կը գտնէ, կը դա-

տէ և կը պատժէ: Թուրք պաշտօնեայք ի՞նչ կ'անեն.— իրողութիւնք պատասխաններ են ու կը պատասխանեն:

Նոր բան մի կայ սակայն որ մասնաւոր ուշադրութեան արժանի է: Հայոց մէկ մասն զժողովութեան նշաններ ցոյց տուած է վերջերս Դրան անխիղճութեան դէմ, կառավարելու անյօժարութեան դէմ: Դուռն բարկացեր է այդ Հայերու դէմ, և զայնս իբրև յեղափոխական գըտնել եւ պատժել ուզեր է: Եւ իւր այդ բարկութեան մէջ նորէն և աւելի առատօրէն ապացուցած է թէ ինքն կառավարութիւն չէ:

Կառավարութիւն մի օրինական իրաւունք ունի ապստամբութիւն նիւթող Հպատակներն գտնելու և պատժելու, նոցա պարագլուխներն սպանելու անգամ: Վայրիկ մի ենթադրելով իսկ թէ Թրքացն ալ օրինաւոր և յարգելի կառավարութիւն մ'է և իրաւունք ունի ապստամբութեան դէմ ելնելու, կը Հարցնեմք թէ ինչո՞ւ այնքան յախուռն կը ձերբակալէ եւ առանց դատելու երկարատեան կը բանտարկէ այնպիսի անհատներ որոց կատարեալ անմեղութիւնն յետոյ կը յայտնուի: Երկրորդ, կը Հարցնենք թէ ինչո՞ւ կարծեցեալ յանցաւորներն կը չարչարէ՝ զայնս բռնադատելու Համար ի խոստովանութիւն այնպիսի դիտաւորութեանց զորս ունեցած չեն: Երրորդ, կը Հարցնեմք թէ ինչո՞ւ յանցաւորներն կամ յեղափոխական ճանչուածներն օրինական պատժով պատուհասելու փոխանակ՝ կը տանջէ, կը չարչարէ, կը նախատէ և կ'անպատուէ:

Միթէ թրքական օրէնսդրութեամբ այդ չարչարանքներ օրինակո՞ւն են: ոչ՝:

Ինչո՞ւ ուրեմն Հակառակ ձեր օրէնքներու կը վարուիք օրինազանցներու Հետ, ո՞ր թուրք պաշտօնեայք:

Ո՛ր Դուռ, ինչո՞ւ օրինազանց կը լինիս ինքնդ, կը կոխտես քո իսկ օրէնքներն՝ երբ կը յաւակնիս այլոց օրինազանցութիւնն պատժել:

Ինչո՞ւ կը մերկացունես, կը մսցունես, կը սառեցունես, ջրի, ցեխի, թրիքի մէջ կը նստեցունես, անօթի եւ ծարաւի կը պահես, մկան կերուք կը կերցունես ու զարչահոտ ջուր կը խմցնես, ծուներ դնել կուտաս կամ գլխի վայր կը կախես ժամերով, կը ծեծես կը խարազանես, տաք երկաթներով և ունեւիներով կը խարեւ,

չամիւր կը մխես, պելներն կը փետես, ընդ քարչ կ'ածես, երեսն ի վար կը պառկեցունես, վերան կը նստիս, կը կոխտես, կը Հահոյես, բերանին մէջ կը թըքես, գլուխն թրիքի մէջ կը թաղես, Հայ մարդուն, Հայ պատանւոյն ու Հայ կնոջ վերայ կը թափես քո անասելի, անհրաժարակելի գարշելիութիւնդ, ո՞ր պի՞ղծ, ժա՛նտ, անղգա՛մ, վա՛տ, անխի՛ղճ, անմի՛տ, անասո՛ւն, անբանացեա՛լ, գաղանացեա՛լ, քարացեա՛լ թուրք պաշտօնեայ... կը գործես ինչ որ գաղանն ալ չի գործեր, և այնպիսի նախատանք կը նախատես բանտարկեալ Հայ պատանին որով դու գրեզ կը նախատես ու կը պատժես մանաւանդ, ու չես իմանար, չես ամաչեր, ո՞ր անբան ու անղգայ ժանտաժուտ...:

Այլ դատաւարտուած ես: Դո՛ւ ես կախուելու արժանի, Հրացանի բռնուելու պարտաւոր ոճրագործն դո՛ւ ես:

Հայե՛ր, թրքաց այս վերջին քստմնելի ոճիրներն չափազանց յստակօրէն կ'ապացուցանեն թէ թուրք պաշտօնեայք Հայ յուզմանց պղտոր ջրերուն մէջ իրենց անասնական ցանկութեանց, իրենց դրամական անօթութեան և իրենց կրօնական ատելութեան յագուրդ կը խնդրեն իրօք և ոչ թէ յանցաւոր: Այս կը նշանակէ թէ նոքա բարբարոս են ու ոչ թէ քաղաքակիրթ քաղաքացիներ, եւ թէպէտ թղթի վերայ օրէնք ունին, իրօք ի գործնականին բնաւ օրէնք և իրաւունք չեն ճանաչեր և երկրի մի տէր ու կառավարիչ լինելու տարրական յարմարութենէն բոլորովին զուրկ են:

Կարծեցեալ ապստամբներու Հետ իրենց վարուելու այդ բարբարոս եղանակն կ'ապացուցանէ թէ Հայեր եթէ արդարեւ ապստամբել ուզէին ու ապստամբութիւն նիւթած լինէին, իրենց պարտք կատարած պիտի լինէին, քանզի մարդկային պատուազգացութիւն ունեցող ու է անձ չի կրնար այդպիսի վայրագ ու ժանտագործ կառավարութեան մի Հպատակիլ:

Թուրքերն ոչ միայն Հայոց վերայ իշխելու արժանի չեն, այլ և իրենք զիրենք կառավարելու անարժան են, եւ թուրք պարզ գիւղացիներն ալ պիտի ապստամբէին իրենց սուտ և կործանիչ կառավարութեան դէմ եթէ մահմետական մոլեռանդութեամբ և տգիտութեամբ կուրացեալ չլինէին:

Այս ամենըն եզրակացութիւնն է թէ Հայոց պարտաւորութիւնն է յեղափոխութեան պատրաստուիլ յօգուտ իրենց եւ յօգուտ շէխարհի, զի թուրք կառավարութիւն անուամբ միայն կայ, և հարկ է յեղափոխութեամբ հաստատել Հայ կառավարութիւն մի գոնէ Հայաստանի համար:

Անկցի՛ թուրք կառավարութիւն,
Կեցցե՛ն Յեղափոխ. ԿԱՍՏԱՆԻ,
Կեցցե՛ն ՀԱՅԱՍՏԱՆ:

ՀԱՅԱԿԵԱՆ ՊԼՏՈՒԻՐԱԿ

Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներէն մին, Մեծայարգ Տէր Նշան Կարապետեան, մասնադէտ քաղաքա-տնտեսութեան (ուսեալ ի Ժընէվ), իբր երեք ամսէ ի վեր կը գտնուի ի Միացեալ Նահանգս, և իրենց կուսակցութեան ճիւղեր կը կազմաւորէ Հայոց մէջ: Վերջերս եկաւ ի Նիւ Եորք, և արդէն երեք անգամ ընդհանուր ժողովներու մէջ խօսած է Հայոց: Առաջին անգամ խօսեցաւ յեղափոխութեան մասին, և, հարցմանց պատասխանելով, տեղեկութիւններ հաղորդեց իրենց կուսակցութեան ծագման, կազմաւորման, գործունէութեան և նպատակին վերայ: Երկրորդ ժողովոյն մէջ խօսեցան նաեւ երկու օտարականներ թարգմանով: Երրորդ ժողովոյն մէջ խօսեցաւ Ընկերվարականութեան վերայ: Արդոյ Պատուիրակն յայտարարեց թէ Հայաստանի մէջ, Թրքի լծէն ազատուելէն անմիջապէս յետոյ, Ընկերվարականութիւն հաստատել չեն խորհիր, վասն զի երկիրն դեռ անպատրաստ է, և թերեւս 25 տարի պէտք պիտի լինի մինչև որ Հայաստանի մէջ ալ գոյանան Ընկերվարականութեան նպատաւոր այն պայմաններ որ այժմ Եւրոպայ և Ամերիկայ յառաջադէմ երկիրներուն մէջ կան:— Քանի որ այդպէս է, ասացին ոմանք՝ յետոյ խօսելով, աւելի լաւ չի՞ լինիր որ այդ հեռաւոր նպատակն այժմէն կուսակցութեան նշանաբան չդրուի, այլ Թրքի լծէ ազատութեան և հայկական ինքնավարութեան ձգտումն դրուի նպա-

տակ: Դարձեալ կարող են կուսակցութեան հիմնադիրք և այլք դաւանիլ ընկերվարական գաղափարներ, և շատերունեալ այլեայլ Ընկերվարական դրութեանց միտումն կամ համակրանք: Չափազանցութիւն չէ՞ պահանջել որ յեղափոխական գործունէութեան նպատակաւ գործակցելու համար հայրենասէրք ընդունին նաեւ Ընկերվարականութիւն: Արդէն շատ դու՛ր պէտք է լինիմք եթէ կարենամք ստուար թիւ մի Հայոց համողել թէ պէտք է ամենայն գնով և զոհողութեամբ ազատիլ թրքական բռնապետութեան լծէն, թէ պէտք է հայկական յեղափոխութեան մի պատրաստուիլ ինքնօրէն լինելու համար. ինչ հարկ կայ որ այժմէն պաշտօնական ծրագրի կեդրոնն դնեմք աւելի հեռաւոր մէկ կազմաւորութեան մի հայեցողութիւնն:

Արդոյ պատուիրակն պատասխանեց թէ իրենց գործունէութեան այժմու ընթացքին և ոգւոյն վերայ շատ մեծ ազդեցութիւն ունի Ընկերվարականութիւնն, ուստի և չեն կրնար դուրս ձգել զայն ծրագրէն:

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Մեծայարգ Տէր Զերազ, խմբագրապետ «ԼԱՌԱՄԵՆԻ» թերթին, հրաւիրեալ լինելով Հայոց եկեղեցւոյն վերայ խօսելու Կրօնական համաժողովին մէջ ի Շիքակոյ, կը գտնուի այժմ ի Միացեալ Նահանգս:

Սեպտ. 4ին Նիւ Եորքի և շրջակայից Հայերն լսեցին զԶերազ: Մեծ բազմութիւն ներկայ էր և մեծ աւելնով ու երկարօրէն ծափահարեցին զյոգնաշխատ գործիչն, որ խօսեցաւ ազգային խնդրոյն վերայ շատ երկարօրէն, և յաւարտ բանիցն ընկալաւ զսկեայ մետալ մի զոր Հայասիրական Ֆանձնախումբն պատրաստել տուած էր: Այս ամենայն կը նկատուէին միանգամայն հանդէս մի Զերազի գրական գործունէութեան 25 ամեայ տարեդարձն տօնելու: Ժողովոյն մէջ երգ չերգուեցաւ և հիւրէն գատ ոչոք խօսեցաւ բաց ի Մեծ: Տիպեանէ, որ կ'ստանապետէր:

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Հայկական խնդրոյն լուծման համար նախնական կարծիքն ներսէս Պատրիարքի և այլոց՝ այն էր որ Բ. Դրան հետ համաձայնութեամբ լինէր, բայց թուրք կառավարութիւնն իւր իրական շահերը չկրնալով հեռատեսել՝ խնդիրը միջազգայինի վերածելու ստիպեց զներսէս։ Այժմ զանազան ծրագիրներ կան խնդրոյն լուծումն յաջողունելու նպատակաւ . ես կը հետեւիմ մէկուն, այն է եւրոպական տէրութեանց միջամտութեան դիմել։ Տաճկաստան տկար է, եւրոպացիք աչք ունին անոր հողերուն, և իրարու վրայ կը հսկեն նախանձով, և չեն թողուր որ մէկն այն հողերէն յափշտակէ։ Յաղթական Ռուսիոյ ձեռքէն իսկ, վերջին պատերազմէն յետոյ, թրքական հողի գրաւեալ մէկ մասն ես առին։ Առանց եւրոպայի մեր գործն կատարել անհնար է։ Կրետացիք զԵւրոպա անհամակիր տեսնելով սուրն ի պատեան դրին։ Մեզ վիճակակից ամեն ազգեր ալ դիմեր են Եւրոպիոյ։

Մեր քաղաքականութիւնն պատեհական (opportuniste) պէտք է լինի, քանի որ տկար ազգ մ'եմք, և պէտք է ջանամք պարագաներէն օգուտ քաղել։ 61դ յօդուածն կայ մեր ձեռքն, Եւրոպայէն խնդրենք ինչ որ ինքն խոստացած է. թող գործադրէ իւր ծրագիրն։ Նախ այդքանն պահանջենք և ձեռք բերենք, ապա երբ տնտեսապէս զարգանանք, կրնանք ինքնօրինութեան հետամուտ լինիլ։ Նաև մեր խնդիրն սահմանափակենք ներսէս Պատրիարքի գծած հայաբնակ գաւառաց սահմանին մէջ. էնկլիւրիւի, Մարդուանի, Կեսարիոյ կողմերն գործ չունինք։ Նաև բնաւ պէտք չկայ Մուրատի խնդիր յուզելու, և պարապ տեղ զՍուլթանն զայրացունելու. մեզ կը վայլէ չէզոք մնալ օսմանցւոյ վերաբերեալ ընդհանուր խընդրոց մէջ։

Իմ գործունէութիւն լոկ տէրութեանց դիմել չէ. կ'աշխատինք Հայ ազգն ծանօթ գործել Եւրոպայի, և զայն սիրելի և յարգելի անել օտարաց։ Մեր գրականութիւն չունի հելլենականին արժէքն, բայց

մենք վայրենի ցեղերէ շրջապատեալ լինելով հանդերձ ինչ որ արտադրած ենք, նշանաւոր է։ Հայ գրականութիւնն ծանօթացունելով Եւրոպայի՝ անոր համակրութիւնն աւելի կը շահինք։

Ոմանք յանցանք կը դատեն ինձ որ սուր չեմ առնուր և Հայաստան երթար։ Միթէ Գամառ-Բաթիպա ևս եթէ սուր առնոյր, աւելի լա՞ն ծառայած պիտի լինէր ազգին քան գրելովն այն բանաստեղծութիւններ։

Կը ճանաչեմ բուռն զօրութեան ալ կարեւորութիւնն, զի փաստն լոկ չբաւեր։ Պէտք է որ Եւրոպա տեսնէ թէ մեր երեսէն վտանգ կայ խաղաղութեան։ Սակայն իմ քաղաքականութիւնս է հայոց փոքրագոյն վնասով մեծագոյն շահ բերել ազգին։ Զէնքի դիմելն ըստ իս վերջին պահու խնդիր է։ Երբ Արեւելեան խնդիրն նորէն ծագի, այն ատեն պէտք է շարժիլ։ Եթէ Հայերն խաղաղութեան ատեն զինեալ ցոյց անեն, քանի որ Եւրոպա կը սոսկայ ահազին պատերազմէն, Հայոց շարժումն կը զսպուի։ Հնչակի մէջ կարգացի թէ Յոյներու դաշնակցութեան հետ միացած են միասին գործելու համար, բայց ահա կրետացիք խելօք կեցած են, Հայերն միայն կը շարժին։ Յոյներն կը տեսնեն թէ այժմիկ անկարելի է նպատակին հասնիլ, իսկ մեր Հայերն զոհ կ'երթան։ Կարելի է 15—20 տարիէն միայն բացուի նորէն արեւելեան խնդիրը, չենք գիտեր, միթէ մինչև այն ատեն պէտք է Հայոց արիւնն թափուի շարունակ։

Ոմանք կ'ուզեն որ այժմէն ընկերութիւն կազմենք վերջին պահու շարժումներուն համար, սակայն մեր ազգն գաղտնապահութեան մէջ պակասաւոր է, եթէ այժմէն ընկերութիւն կազմուի, վախեմ թէ գործի ժամանակէն շատ առաջ, գուցէ 4—5 տարիէն կը մատնուի ու կը քայքայուի։ Զէնք փոխադրելու դժուարութիւն կայ, և հարկ ալ չէ. միթէ Քրդերն ու Զէրքէզներն ալ իրենց զէնքերն օտար երկրէ կը հայթայթեն։ Զինուորական կրթութեան ալ պէտք չունինք, եթէ այնպիսի կրթութեան համար ընկերութիւն կազմուի, անգամք մատնանիչ կըլինին և փորձութեան կը հանդիպին։ Մերն կանոնաւոր կռիւ չպիտի լինի։ Յիշենք թէ արդէն կովկասի մէջ Հայ զինուոր շատ կայ։

Թող թերթերն չարունակեն գինու-
րական ոգին մշակել ժողովրդեան մէջ,
ազգ ու հայրենիք սիրելու յորդոր կար-
գալ և այսպէս պատրաստել վերջին պա-
հու շարժումներուն: Եթէ լինին այնպի-
սիներ որ անիրաւութեան չհանդուրժելով
դիմագրել ուզեն, լաւ կանեն որ լեռն ել-
նեն, լեռն ելնելուն մէջ վտանգ չեմ տես-
ներ, զի իբրեւ անհատական գործ կը նը-
կատուի անոնց շարժումն, և բոլոր ժողո-
վուրդն իբրեւ մեղսակից չի մատնուիր
զուր նեղութեանց:

Կեդրոն կազմաւորելու խնդրոյն կը
համակրիմ, միութեան զօրութեան կը հա-
ւատամ, բայց չեմ կարծեր թէ ծրագիրն
գործնական է: Իրական միութիւն պէտք
է և ոչ թէ լոկ ձեւական: Գործիչներուն
ամենուն ալ յարգը կը ճանաչեմ: Խոր-
հուրդ կուտամ հնչակեաններուն որ իրենց
ծրագիր երկուքի բաժնեն, նախ փրկու-
թիւն ի հարստահարութենէ դնեն նպա-
տակ, որ առ այժմ ամբողջ ազգին ուժե-
րն զբաղեցունելու կը բաւէ. ընկերվարա-
կան վարչութիւնն թողուն ապագայ գոր-
ծունէութեան՝ առանց ի հարկէ հրաժա-
րելու իրենց ընկերվարական սկզբունքէն:

Չկարծուի թէ նիւթական ակնկալու-
թեամբ կ'աշխատիմ, եւ ոչ պաշտօնի ակն
ունիմ, քանզն յայտնի է թէ անկարելի է
ինձ պոլիս ոտք կոխել, զթուրք կառա-
վարութիւնն անհաշտ թշնամի ունենալով:

Վերջացունելէ առաջ կը բաղձամ յա-
ւելուլ թէ ես բարետես աշօք ազգային
խնդիրն նկատողներէն եմ: Հայք ան-
միաբան են կ'առեն, Հայոց մէջ մատնիչ
շատ կայ կը կրկնեն. չեմ կարծեր ես թէ
ճշմարտիւ Հայերու մէջ աւելի քան այլ
ժողովրդոց մէջ կայ անմիաբանութիւն և
մատնչութիւն: Յունաց և Պուլկարաց և
այլոց պատմութիւններն կեցած ես զայս
ապացուցանելու:

Քաջալերիչ է նաև դիտել թէ Եւրո-
պա այժմ շատ աւելի կը ճանաչէ Հայերն
քան 25 տարի առաջ: Օգտէն Խօճառարեան
խմբագիրն, կը յիշեմ, ասաց օր մի թէ
երբ անգլիական Թայմզի մէջ Հայոց մա-
սին խնդիր յուզուի, պիտի հաւատամ թէ
դարման մի պիտի լինի մեր վիճակին.
այժմ Թայմզի և այլ լրագրաց մէջ յա-
ճախադէպ են Հայոց վերայ յօդուածներ:
Քաջալերական եղելութիւն մ'ալ այն
է որ Խրիմեան Հայրիկ կաթողիկոս եղաւ,
նա ալ կարող է մեծ դեր խաղալ:

Ն. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՔՆԵԱՂԱՏՈՒԹԻՒՆ

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶԻ ՃԱՌԻՆ

Սեպտ. 9ին ժողով մ'եղաւ ուր նիւ
Եորքի հասկացող և ուսեալ Հայերն ալ
փութացած էին ներկայ գտնուիլ՝ լուելու
համար թէ Հնչակեան կուսակցութեան
ներկայացուցիչն որպէս պիտի քննադա-
տէ Փրոֆ. Չերազի բանախօսութիւնն:
Այդ երկար քննադատութեան ևս կարեւ-
որագոյն մասանց համառօտութիւնն մեր
ընթերցողաց կը ներկայացունեմք ահա-
ւասիկ:—

Արդարեւ կանխահա՞ն է յեղափոխա-
կան իւրստումներն անել այժմէն, որպէս
կը կարծէ Տէր Չերազ: Պէ՞տք է սպա-
սենք մինչև որ արեւելեան խնդիրն նորէն
ծագի, և այն միջոցին շարժիմք:

Ե՞րբ պիտի ժազի այդ խնդիր, ինչ
հանգամանաց տակ, ինքն կրնայ գուշակել:
Եւ դիցուք թէ գուշակել կ'արեւայինք ինչ
ինչ նշաններէ, միթէ ժողովուրդն վառել
ճրագներ վառելու կը նմանի՞ որ ելեք-
տրական կոճակին կոխէինք և հազարաւոր
երեւէին իսկ և իսկ բաղձալի պա-
հուն: 500 տարուան ստրկութեան մէջ
թուլացած ժողովրդի հետ է մեր գործ,
և հարկ է որ աստիճանաբար կրթեմք զայն
այժմէն:

Եւ միթէ Հայերն խաղաղական միջոց-
ներն արդէն փորձած սպառած չե՞ն, ինչ-
պէս կուզէ մեր բարեկամն: Ինչ խաղա-
ղական միջոց մնացած է փորձելու: Հա-
յաստանի ժողովրդեան ներկայ վիճակին
ի մօտուստ ծանօթ գործիչներն գիտեն
թէ Հայերն այլ ևս համբերելու կարողու-
թիւն չունին, նոցա վիճակ անտանելի
դարձած է: Պէտք է որ Հայեր իրենց խը-
լրտումներով հասկցունեն Եւրոպայի թէ
համբերել չեն կրնար, որպէս զի Հայոց
խնդիրն ձեռք առնուի, քանզի Եւրոպայի
պետութեանց առջեւ խնդիր շատ ու շատ
կայ, և կրնայ պատահիլ որ մեր խնդրոյն
կարգն չափազանց ուշ գայ եթէ նոցա
բարեհաճութեան թողունք:

Ապաքէն լաւ քաղաքականութիւն է
քիչ զոհով փրկել զՀայաստան. ո՞ր յիմար
կայ որ այդ փափաքն չի զգար: Բայց ա-
ժան գնով ազգ մի չի ազատիր: մատնիչ-
ներ ալ ի հարկէ պիտի լինին ուր որ գոր-

ծիչ լինի, այդ ալ բնական է: Գործն ահա գին է, և շատ դժուարութիւն կայ, բայց չենք կրնար չի գործել վասն զի դժուարութիւն կայ: Արջէն վախցողն ոչ անտառ կրնայ երթալ և ոչ փայտ կրնայ ունենալ:

Իրաւ է թէ այս միջոցիս շարժումը ընողներն միայն Հայերն են, բայց այս ալ դատապարտելի չէ: Ուրիշներ ալ առանձին շարժած են. Արաբիա ալ առանձին էր երբ ապստամբեցաւ, Կրեաէ նոյնպէս: Ացալիսի շարժումներ ճիշդ ուղուած ատեն չեն լինիր միշտ, այլ պէսպէս պարագաներու ազդեցութեան ալ կը հպատակին: Արաբիոյ ապստամբած պահուն բաղձացինք որ Հայք ալ շարժէին, բայց չեղաւ: Արեւելեան Դաշնակցութեան հետ Հնչակեանց միանալուն նպատակն լոկ այն չէ որ Կրեաէի հետ միասին շարժինք, այլ և այն որ՝ կարենանք Աթէնքի մէջ ամուր պահել մեր կեդրոնն. և յիշուի պահեցինք զայն ցոյսօր՝ ի հեճուկս թուրք կառավարեան ջանից:

Ընկերվարականութիւնն վերցունել կ'առաջարկէ մեր ծրագրէն, կամ ծրագրին առաջին մասէն, որպէս զի Եւրոպացիք չի խրաչին: Տէրութիւնք ոչ թէ կը հալածեն զընկերվարականներն այլ կը վախեն անոնցմէ, և մի քանի հազար Հայերու յաւելուածոյ թիւն եւրոպայի միլիոնաւոր ընկերվարականաց վերայ՝ շատ տարբերութիւն չունի: Մուրատի խնդիր յարուցանելով զՍուլթան Համիտ մեզ դէմ ի գուր զայրացունել անխոհեմութիւն է եղեր. աւելի լաւ է մեզ համար եթէ Համիտ կը վախէ այդպիսի խնդրոյ մի յուզումէն: «Մեծ Հայքի» սահմանէն դուրս շարժում չանելու սկզբունքն ալ չեմք կրնար ընդունիլ, քանզի եթէ ուրիշ գաւառներու Հայերն դժգոհ չերեին, կրնան եւրոպացիք ասել թէ միթէ նոյն կառավարութիւն չէ՞ ամեն տեղ, ինչո՞ւ արտաքոյ Հայաստանի գոհ են Հայեր:

ՆԱԽԵԿ ԻՍԿԷՆՏԵՐՈՒՆԷ

Իսկէնտէրուն, 14 Օգ. 93

...Խմբագիր,

Գիտէ՞ք թէ այս օսմանեան երկրին ծովեզերքին տիրող մէկ նոր օրէնք մի կայ որ է «օսմանը վաճօրու իլէ կէթմէլի»: Ու է Հայ, ունենալով կանոնաւոր անցագիր, չի կրնար օտար նաւով ճամբորդել: Մինչև իսկ վաճառականն որ կ'ուզէ կ'. Պոլիս կամ Պէյրութ երթալ և ունի օրինաւոր անցագիր, հրաման չունի օտար շոգենաւ նստելու: Խեղճ մարդն պարտի չնչել Իսկէնտէրունի թունաւորեալ օդն միչև օսմանցի շոգենաւն հասնի, որ, հարկաւ, որոշեալ օր և ժամ երբէք չունենար: Եւ անցագիր հանել՝ ո'րքան դժուար եղած է: Մօտերս ծանօթ վաճառական մի երեք շաբաթ դուռն գնաց ու եկաւ Պոլսոյ անցագիր մի հանելու համար:

Ժողովուրդն շատ աղքատացած է, և տակաւ կ'անկանի: Տուրքերն շատ են եւ ծանր: Տասանորդի տուրքն երբէք մէկ տասներորդ չէ: «Եօլ վէրկիսի»ն ալ օրինաւոր տուրքերու կարգն է անցած, բայց կանգնաչափ մի ճամբայ չինելու դիտաւորութիւն չկայ: Գինեատուն չինելու հրաման դիւրաւ կը տրուի, բայց դպրոց եւ եկեղեցի՝ դրեթէ անկարելի դարձած է: Այսու ամենայնիւ մարդիկ միշտ հարկ կը զգան շոգեքորդելու և բարեմաղթութիւններ անելու վասն կենաց վեհապետին: Ագգային խնդիրն եկամուտի պատուական աղբիւր մի-քիմիա՝ դարձած է: Երբ կասկած կայ թէ այս ինչ Հայն մի քիչ հարուստ է, կառավարութիւնն աչքն կը տնկէ նորայ վերայ, զայն «փոլիթիքա միւթթէ-հիմի» կը ճանաչէ, և կը ծծէ կաթն...:

Մօտերս Երեզացի Զօրաբարէլ Տօնաթոսեան լուսանկարիչն ձերբակալուեցաւ յԵդիսիա և տարուեցաւ ի Տիգրանակերտ, առանց դատաստանի բանտարկուեցաւ, աւելի քան 100 լիրա ծախսեց «թէպրիլէ» ստանալու համար: Մարդն գլխովին անմեղ էր որպէս արեգի ճաճանչն: Պարագայք որ իրենյանցանք համարուած են ահաւասիկ — Պաղտատէն գրած էր Տօնաթոսեան առ երիտասարդ ոմն ի Տիգրանակերտ, ի պատասխանի սորա հարցման, թէ ինքն

ի մօտոյ պիտի երթայ Հալէպ, և եթէ կը փափաքի, կարող է նա եւս հոն գալ եւ ուսանիլ լուսանկարչութիւն: Ազգային խնդրոյ հետ ու է գործ կամ անուղղակի կապակցութիւն անգամ ունեցած չէ:

«Մուխպիրիք» կամ լրատուութիւնն ալ նոր արհեստ մ'է այժմ այս երկրին մէջ, որում կը հետեւին վատ անճարակներ: Եօղուն Օլուքի մէջ երեք եղբայրներ այս օրեր ամբողջ գիւղն մատնեցին, կառավարութեան ծանուցանելով թէ գիւղացիք գէնք բերեր և Հայաստան ուղարկեր են. սակայն իրողութիւնն այն է, որպէս ըստուգուած է, թէ այդ բացարձակապէս սուտ է, զրպարտութիւն է:

Երկնից արեգն երբէք չհայեցաւ աւելի վատթար կազմակերպութեան մի վերայ: Այնքան անգթութիւն, անխոհութիւն, անիրաւութիւն կայ որ աւելի քան զայն դժուար է երևակայել: Մարդ կը վախէ քան զամենայն հասարակ բաներն ասելու: Յայտնապէս կառավարութիւնն որոշ սկզբան մի վերայ կը գործէ, այն է աղքատացունել ամեն հարուստ Հայ, եւ ազգն այն աստիճան տկարացունել որ այլ ևս չգօրէ կանգնել: Ծծել կաթն որ մինչև ծիծն ցամաքի ի սպառ: Դուք, հեռուէն դիտողդ ամեն բան չէք կրնար երևակայել. իրաց վիճակն յոյժ յոյժ գէշ է:

* * *

ԵՄԵՐԻԿԵՅԻ ՀԱՅՆԻՐՆ

ԲԱՆԻՆ ԳԻՆ ԿՏՐԵԼՈՎ ՕԳՏԱԿԱՐ ԿԵԼԼԵՆ

Բարին կամող Տէր,

Ձեր «Հայք» հանդիսի ամեն թիւերուն մէջ ալ Ամերիկայի Հայոցս օգտակար խրատ մը կը գտնուի, ինչպէս ևս վերջին 16դ թուոյն մէջ ալ «Ամերիկայի Հայերն ինչպէս առեւտուր կ'անեն» վերնագրով յօդուածն, որուն առթիւ երկու խօսք ունիմ խօսելու:

Նախ պիտի համարձակիմ ըսելու թէ, Հայոց առեւտուրին չհաւնող գառիմորթին ներքեւ ապրող ամերիկեան գայլ խանութպանք իրենք սովորեցուցեր են Հայոց թէ ձեր երկրին սովորութիւնը հոս ալ կայ— բանին գին կտրել, և ոչ թէ Հայք իրենք երկրին սովորութիւնը հետեւին բերեր են:

1889ի վերջերն էր, ես մի ձեռք հանդերձի կարօտեցայ: Ծանօթներուս հարցայ թէ ո՞ւր աղէկ հանդերձ կը գտնուի չափաւոր գնով: Ելանք գացինք շատ տեղեր ժուռ եկանք, խանութներուն դրսի կողմէն նայելով մեկու մ'ալ չհաւնեցայ, վերջոյ տեղ մ'ալ գացինք նորէն դուրսէն նայելով հանդերձ մը սիրեցի, մըտանք ներս: Բերել տուի այն հանդերձը որ ես սիրեր էի, հարցանք գինը քանի՞ է մարդը պատասխանեց թէ մենք արդէն մէկ գին ունինք, ինչպէս կը տեսնէք ոյ պատերը գրեր ենք, Անգլիերէն, Գերմաներէն, Ֆրանսերէն մէկ Գին, և եւս հանդերձին արժէքն է 15 տոլար. մենք ալ մէկ գին է գրուածին համար ձայն չի հանեցինք դուրս ելանք: 14 տոլար մեզ կանչեց— 14 տոլար ալ չենք տար: Եկէք ուրիշ տեսակ մը առէք,— ուրիշ չենք ուզեր. շատ թախանձանօք մեզ ներս տարին նորէն, դուք ո՞րքան ստակ ունիք, քանի տոլարնոց հանդերձ կուզէք,—մենք մէկ խօսքով 10 տ. 50 տ. տուինք առաջի հանդերձին, իրենք ալ տուին: Տէր, յիշէ թէ աս խանութին մէջ երեք չորս լեզուաւ «ուրն փրայս» Միկ Գին գրուած համեստ նշանակութիւնը մե՞նք ոտքի տակ առինք թէ ինքն իսկ գրողն:

Կ'ըսեմ միթէ մենք փորձեցինք գին կտրել թէ, ամերիկեան խանութպանը ջանաց մեզի հասկցնել թէ, ինքը կարող է իւր օրէնք ոտքի տակ առնուլ, և դարձեալ չի՞ նշանակեր թէ, այդքան մի քաջուիք, ձեր երկրի սովորութիւնը հոս ալ կայ:

1890. աշունն էր տղան Պրն. . . . Ուստըրէի Նիւ Եորք եկաւ, ժամանակ վերջը իւր հոն եղող բարեկամին մին ալ եկաւ. (կարծեմ փեսան էր գալողը) ասոր գալուն 2դ օրն էր որ առաջարկեց իւր փեսին որ երթան իրեն մի վերարկու առնեն—Նիւ Եորքցի մալհետերին առնելով ըսին մեզ տար այնպիսի տեղ մը որ շատ չէնկէ չի ծեծենք:

Ասոնք կերթան 8դ պողոտայի վրայ ուր որ կը խորհին թէ պատուաւոր խանութ է անդ կը մտնեն, հոս չմոռնամ ըսելու թէ, Ուստըրէն գալող նորեկը կը պատուիրէ այս խանութին մէջ իրենք անգլիերէն չխօսին:

Բերել կուտան ԳՈԹ մը, կը հարցնեն գինը քանի՞ է, — 11 տոլար 75 սէնթ.

պտկէ վար չէ՞ կարելի լինիլ կը հարցնէ Հայն, — դուն քանի կուզես վճարել, — 6 տոլար կըսէ Հայը: Խանութպանը կիջնէ մինչև 8 տոլարի, բայց Հայոց տակաւին սուղ կը թուի: Գին կտրող Հայն խանութպանին կ'ըսէ, գիտես որ այս քոթը ինծի համար չէ, ես իբր թարգման եկած եմ հետերնին, և թէ մտադիր չեն առնելու, եթէ 8էն մէկը ինծի կուտաս ես քեզի համար առնոք համոզեմ որ առնեն: Խանութպանը խսկոյն կը հաճի ատ բանին:

Եկ, բարեկամ, ուստի խոստովանինք թէ Հայոց գին կտրելու կերպը չահաւոր է և անպատիւ խանութպանին առջեւ անանպատուութիւն ալ չէ:

Գանք միւս կէտին: Հայերը ապրանք թող ջանան ճանաչել, գին կտրելու տեղ:

Ես կարող եմ ըսելու թէ, Ամերիկայի տպրանքը չի ճանաչուիր. մանաւանդ մեզի, Հայոցս, անկարելի է ճանաչել. վասնզի, գրեթէ ամեն օր նոր ապրանք կելլէ, աժան քան հինն: Ես որ մետաքսի գործաւոր եմ, կը տեսնեմ այսօրուան ելած գործուն վրայ վաղը ինչ տարբերութիւն կը դնեն:

1893 Յունվարին էր մի հովանոց գընելու համար չուկայ ելայ. գացի տեղ մը գեղեցիկ հովանոց մի տեսայ, մտայ ներս, ուզեցի հովանոցը, բայց խանութպանը ուրիշ մի տուաւ, ըսելով ձիշդ քու ապակիին ետեւ տեսաճիդ յար և նման է:

Ձեռք առի տեսայ թէ սուտ է, իրեն բան չասացի: Գինը քանի՞ է. — 6 տոլար: տեսածի՞ն գինը, ասացի, ես այն կուզեմ, ինքը նորէն պնդեց թէ նոյն է. ասացի զիս մի համոզեր, եո գիտեմ որ աս աղէկ տեսակը չէ. բայց ինք զիս համոզել կը ջանայ: Ասոր գինը իջաւ 3 ու կէս տոլարի:

Ես համոզման ձեւով իրեն ասացի, վստա՞հ ես թէ աս և դուրսի ապրանքն մէկ է. չլինի որ սխալած լինիս. — Օ, ո՛չ ո՛չ: ձիշդ ատ խօսքին ես ասացի, իմ ուզածս տուր քեզի չորս տոլար տամ:

Ատ ուրիշի համար յատուկ պատուիրուած է ասաց, վաղը պիտի գայ տանի: Հարցաւ դուն ինչ գործաւոր ես. երբ աս հովանոցներուն տարբերութիւնը մեկնեցի խանութպանին, կարմրաւ:

Ուրեմն կարծէ որ մենք Հայերս գին կտրել կտրելը չմոռնանք. մանաւանդ որ Ամերիկայի մէջ ատ սովորութիւն է...

Գանք վերջին կետին. Ո՛րքան յարգելի է ձեր խօսք որ կ'ասէք Հայերը ծուռ ու մուռ շարժումներ թող չանեն իրենց առեւտուրին մէջ:

Աս խօսքին վրայ ես երբէք խրատ մը չեմ կարող տալ, քանի որ ես խրատի կը կարօտիմ. միայն կը դնեմ հոս մի քանի շարժումներու ցանկն, որ դուք բարեհաճիք ատ մասին խօսիլ, նաև սահման մը ցոյց տաք առեւտուրի մասին. գին կտրել բայց որքան խօսիլ հարկ է խանութպանին հետ: Ես չատ Հայոց հետ գացեր եմ բան մը գնելու. դուրս եղած ատեն չեն որոշեր թէ ինչ պիտի առնեն և ինչ տեսակ. դին կը կտրեն հապա ապրանքին աղէկ կը նային, խիստ շարժմունք կ'անեն, շրթունքը դէպի դուրս կը հանէ, ուսերը վեր կը քաշէ, վիզը կերկնցնէ, չեմ գիտեր ասել կ'ուզէ: Վաճառողին յայտնի պիտի անեն թէ սուղ է: Շրթունքները իրար կը սխմեն, երեսին կը թթուեն, զըլուխին կը ցնցեն, կեցած տեղերնուն չեն շարժիր, ատանկ այլանդակ կերպով մարմնովնին դէպի դուրս կը ծռին, թեւերնին ալ բաց, ասել կ'ուզեն թէ դուրս կ'երթանք, ի՞նչ ասել կ'ուզեո խառութպան: Ուրիշ չատ այսպիսի բաներ:

Տէր, ընդունեցէք յարգանքս,
ՓՈՐՁԱՌՈՒ ՈՄՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

ՎԵՐԻ ՆԱՄԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Որպէս զի մեր թղթակցին նկարագրեալ փորձառութիւնն տեղի չտայ թիւրիմացութեան, արժան է յաւելուլ երկու խօսք:

Ամերիկայի մէջ ամեն տեղ ընդհանուր սովորութիւն է մէկ գնոյ վերայ վաճառումն անել. գներն յաճախ նշանակուած ալ կը լինին ապրանքին վերայ եւ այդ որոշ գինն յիրաւի վերջնական է, և ոչ ոք ինքն իրեն թոյլ կուտայ գին կտրելու փորձ անել, բայց եթէ չգիտութեամբ անէ ալ ոք, որքան ալ երկար խօսի, անհնար է որ գինն իջեցունել տայ:

Բայց կան օտարականներ և մանաւանդ հրէայ խանութպաններ որք ոչ այնքան պատուաւոր պողոտաներու վերայ խանութ բացած են և երկրին քովորդը:

թենէն օգուտ կը քաղեն Մէկ Գին ունինք ասելով և սակայն իրօք չսենեակով ոչ գին և ոչ խիղճ։ Այդպիսիք են որ խանութի ներքին պատերն խոշոր գրերով կը զարդարեն «Միայն մէկ գին ունիմք» ծանուցմամբ։ Պատուաւոր խանութպանն այդպիսի յայտարարութիւն չաներ և պէտք չունի անելու։ Բայց կեղծն ի հարկին կը կոտրէ գինն և ասա կը հաւտացունէ կապածոտ յաճախորդին թէ նորա համար բացառութիւն մ'արաւ։

Ուրեմն մեր հայրենակիցներ թող ոռվորին ապրանք ճանաչել և մարդ ևս ճանաչել։— զանազանեցած ապրանքն բարձրէն և հրէայ խաբեբայն պատուաւոր «եանքի»էն։ Արդարեւ զայլ այդ հրէայ կամ հրէամիտ օտարականք են որք ամերիկացի գառին երեւոյթ առած կը պատրեն պարզամիտ Հայերն։

Լաւ է որ մարդ այդպիսի վաճառողներու հետ գործ չունենայ, բայց եթէ ունենայ դժբաղդաբար, հարկաւ դին կտրել հարկ կը լինի։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ՔԱՂԱՔԱՑՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆ

Աւելորդ է ի լինիր ծանուցանել մեր ամերիկաբնակ հայրենակցաց թէ միջոցներ կը պատրաստուին այս երկրի կառավարութեան զգացունելու թէ ամերիկացի Հայերն Տաճկաստանի մէջ ըստ արժանւոյն պաշտպանելու պարտաւոր է։ Պետական քարտուղարին հետ մեր թղթակցութենէն տեսնուցաւ (թիւ 14) թէ երկուց երկրաց միջև դաշնագրական այնպիսի համաձայնութիւն չկայ որոյ զօրութեամբ՝ միանգամ ամերիկացի ընդունուած Հայեր երեք կամ աւելի տարի Տաճկաստանի մէջ բնակելէ յետոյ կորուսանեն իրենց ամերիկեան քաղաքացութիւնն։ Ուրեմն Միացեալ Նահանգաց կառավարութիւնն անխուսափելի պարտականութիւն ունի այդպիսի Հայերու ընծայել ամենայն պաշտպանութիւն թէ և նոքա ցկեանս միան ի թուրքիա։

Իրաւ է թէ ոմանք չեն կրցած վայելել այդ պաշտպանութիւն, բայց այդ է ի նշանակեր թէ ամերիկացի լինել անօգուտ է։ Յանցանքն քիչ մ'ալ այդ Հայերուն է որ չեն զգար թէ որպիսի հզօր երկրի քա-

ղաքացի եղած են, իրենց թղթեր ու անցագրեր դիւրաւ ձեռքէ կը հանեն, եւ դիւրաւ կը լռեն ու կը հրաժարին իրենց իրաւունքներէն։ Պարտին գաւառային թոյլ հիւպատոսին դէմ բողոքել Պոլսոյ ամերիկեան դեսպանին և եթէ դեսպանն ալ թոյլ գտնուի, բողոքեն անոր դէմ ևս Ուօշինկթընի կառավարութեան։

Պէտք է գիտնալ թէ այս երկրին քաղաքականութիւնն այս ինչ կամ այն ինչ հիւպատոսին ձեռքն չէ, և թէ մինչև իսկ արտաքին գործոց նախարարն չի կրնար իւր երկրին հանրային կարծեաց հակառակ քաղաքականութեան հետեւիլ յարեւել։ Հանրապետական ազատ կառավարութեան առաւելութիւնն է այդ։ Երբ ժողովուրդն իմանայ թէ իւր քաղաքակիցներ չեն պաշտպանուիր օտար երկրաց մէջ բաւական ուժով, կը բողոքէ և կառավարութիւնն կը հնազանդի այդ բողոքոյ։

Մեր նպատակն է անգլիերէն լրագրաց միջոցաւ զխնդիրն ծանօթացունել հանրութեան, և այդ նպատակի համար է որ մեր հայրենակիցներէն նիւթ կուզեմք։

Թղթակիցներէն կը խնդրեմք որ անունով, տեղով և թուականաւ պատմեն իրենց դէպքերն։ Ոմն մեզ գրած է թէ ինքն գիտէ ամերիկացի Հայ մի որուն Քաղաքացութեան թուղթն թուրք կառավարիչ մի՝ յետ զննութեան՝ նախատանօք ետ տուած է։ Այս տեղեկութիւն առ ոչ ինչ կը ծառայէ մեզ ցորչափ մանրամասն չի գիտնամք թէ որո՞ն թուղթն է եղեր, ո՞ր քաղաքի մէջ, ո՞ր կառավարչի առջեւ և ինչ առթիւ այդպէս արհամարհուած է։

Նաև խորհուրդ մի կուտամք մեր Հայ եղբարց. ամէն անոնք որք օրինական թուով տարիներ բնակած են կամ պիտի բնակին այս երկրի մէջ, թող հետամուտ լինին քաղաքացութեան։ Այդպէսով թէ այս երկրի մէջ աւելի կ'օգտին և Հայոց ազդեցութիւնն կ'աւելնայ քուէարկութեանց առթիւ, և թէ ի տաճկաստան վերադառնալէ յետոյ բաղդատաբար շատ աւելի ապահով վիճակ կ'ունենան։ Անկարելի է որ թուրք բարբարոս կառավարութիւնն կարենայ խօլաբար վարուիլ ամերիկացի Հայուն հետ ինչպէս կը վարուի Հպատակացն հետ։

Քաղաքական

Ազգային

ԵՒ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Կեսարիոյ մէջ Հայեր բուռն փորձ մ'են արեր բանտէն ազատելու համար իրենց այն Հայրենակիցներն որք իբրեւ խռովարար բանտարկուած են: Այս անգամ անյաջող եղան բայց կը սպառնան նմանօրինակ ուրիշ ցոյց մ'ես անել: Թուրք պաշտօնեայք կը պատրաստուին նոր խռովութեան:

Հէրալտ (Ն. Եսրբի) այս Լրոյ առթիւ կը պատմէ վերջին խռովութիւններն և կը յաւելու. — «Միւսաւրմանք անիրաւ էին յայտնապէս, նախադարձակ եղած լինելով: Եւ սակայն զի՞ չեն պատժուած: Զի կեդրոնական կառավարութիւնն ի Կ. Պոլսի կը հաւատայ թէ լաւ է մահմետականաց խօգնութեանց աչք գոցել: Եթէ մահմետական դժգոհութիւնն ուրիշներն հարուածելու առիթ վայելէ, կը կարծուի թէ նորա զօրութիւնն այնքան երկիւղալի չլինիր Սուլթանի գահուն համար:»

*

* *

Քրիստոսը եթ ուրիշ անուն չարթաթերթին Նիւ Եսրբի կ'առէ թէ «Արեւելից ապագայն շատ աւելի քան մենէ բազումք կը հասկնան կախումն ունի այն բաներէն որք կը պատահին Հայոց: ... Դատապարտելոց մասին Սուլթանին ուղղեալ բողոքներն ունեցան իրենց արդիւնք, սակայն Թուրքիոյ տկարութիւնն նորէն երևան ելաւ, և նոր ապացոյց տրուեցաւ թէ ինչպէս նիրհող խնդիրն Արեւելեան կրնայ վերստին զարթնուլ:»

*

* *

Պետական Քարտուղար Կրէչէմ հրահանգ տուած է ամերիկայի Դեսպանին ի Կ. Պոլսի անմիջական և խիստ քննութիւն պահանջել Բ. Դոնէն վերաբերութեամբ

այն յարձակման որ գործածուած է Մուսուլի կողմն ամերիկացի Օրիորդ Աննա Մելդոնի վերայ: Նաև ամերիկեան մարտանաւ մի յղուած է ի ջուրս Պոսֆորի:

*

* *

«ՏէՅԼԻ ՆԻԻԶ»-ի կը հեռագրէ Օտէսայի թղթակիցն.

«Տաճկաստանի Քրդերն վերջերս անսովոր յանդգնութեամբ մի կը յարձակին Կովկասեան Ռուսիոյ սահմանագլխի գիւղերուն վերայ: Մի քանի օր առաջ աւագակ քրդաց ձիաւոր խումբ մի յաջողեցաւ Սարըգամիշի մօտ ուսական գիւղէ մի յիսուն լուծ եղ քչել տանիլ գիւղերով, խաղախներու խմբակ մի գհետ պնդեցաւ նոցա բայց մութին շնորհիւ աւագակք խուսափել կրցան: Եթէ «քուրդ հեծեալազօրք» տիրադոսն կրող այս անկանոն ձիաւորներն չզսպուին, Ռուսիա բանաւոր չքմեղանք մի պիտի գտնէ իւր Հայաստանեայ սահմանագիծն քիչ մ'ես ուղղելու:»

*

* *

Մեծայարգ Տէր Ն. Տաղաւարեան, մեր գիտուն Հայրենակիցն որ «Գիտական Շարժում» ամսաթերթին կը խմբագրէր երբեմն, Բժշկական ուսմանց շրջանն ևս աւարտելով ի Փարիզ, ստացած է Բժշկութեան տոքթօսի վկայական: Իւր ուսումնաւարտական ճառն միզային քարերու վերայ գրած է:

*

* *

Իզմիրի Ազգ. վարչութեան ծախքով, երկու երիտասարդներ որք տեղւոյն վարժարաններուն մէջ իրենց ուսում առած են, ղրկուած են ի Ֆրանսա, Թուրքի վարժապետանոցին միջ իրենց ուսումը կատարելագործելու եւ ուսուցչական արուեստը սորվելու, զոր ապա ի գործ պիտի դնեն Իզմիրի վարժարաններուն մէջ և իրենց ստանալիք թոշակէն մաս մաս պիտի վճարեն իրեց համար եղած ծախքը: Գովելի նախաձեռնարկ:

ՄԱՍԻՍ

Տեղւոյ անձկութեան պատճառաւ զանազան թղթակցութիւններ և այլ և այլ տեղեկութիւններ յառաջիկայ թուոյ վերապահել ստիպուած է խմբագրութիւնս:

* * *

«ՀԱՅՔ»Ի ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«Հայք» մեծաւ շնորհակալութեամբ ստացած է նուիրատուութիւններն—

Ի Մեծ. Տեսարց

Թ. Չոփուրեան	2 տոլար
Համակրող ոմն	5 „
„ „ „	2 „

Շնորհակալութեամբ ստացանք «ԱՐԱՔՍ» պատկերազարդ վեցամսեայ Հանդիսի 1893 թուականի առաջին թիւն: 204 երեսներէ կը բաղկանայ բուն մարմինն, որուն կը հետեւի գեղարուեստական բաժինն ընտիր պատկերներով, մեծ մասն Հայկական, ընդ ամէնն 31 պատկեր:

«Արաքսի» գինն 2 հատորոց համար 3 թուրքի է, այսինքն մէկուկէս տոլար: Իւրաքանչիւր հատորոյ գինն է երկու թուրքի ու կէս: Պէտք է դրամն յղել առ խումբագիրն

MONSIEUR SIMEON GOULAMIRIANTZ
St. Petersbourg, RUSSIE

առթիւ

1794 ՀԱՐԻԻՐԱՄԵԱՅ 1894

ՅՈՒՆԵՍԻ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԼՐԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ 1894 ՍԵՊՏ. 1ԻՆ

Մեծ միածալ դիրքով լուսատիպ պատկեր մը, տպուած 70x45 ոսնդիմետր քարտոնի վրայ այլ և այլ բնագրով, մեջտեղն Հայ Լրագրութեան հիմնադրին պատկերն, և բոլորտիքն 1894ին Հայերէն լեզուաւ հրատարակուող բոլոր Լրագիրները, իրենց խմբագրապետներու պատկերներով: Պատկերն կարելի է ստանալ բաժանորդագրութեամբ, գինն է 50սէնթ կամ երկու ֆրանք ու կէս: Պէտք է իմել ուղղակի առ Խմբագրութիւն ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ ԼՐԱԳՐԻ,

Ի Վանս միթիարեան

ՎԻԵՆՆԱ, ԱՒՍՏՐԻԱ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱԼՎԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

(«Հայք»էն Հանուած)

Մ. Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆ

Ազգային Բաղաքականութեան վերայ Հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գործներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն: Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ:

ՊԱՏՈՒՀԱՆԻ ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐ, աժան եւ պատուական պիտի գտնէք մեր խանութն, Հատն 20, 25, 30, սէնթի: Նաեւ պատի թուղթ: Հրամայէք ի

250 Main St. (Մէյն փողոց)

WORCESTER MASS.

Յրանք Հօէի միթերանոցն



SECOND HAND BICYCLES

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԵՏԵԼԱՆԻՒՆԵՐ

Այնպէս կը մորոգեմք որ մորի պէս կ'երևի և կը վաճառենք այն գնով որ մեզի արժած է՝ վասն զի չենք ուզեր գալ եղանակին պահել զայնս: Հեծելանիւմներն կրնաք հոս գործածել և առկա տանել ձեր սիրելի հայրենիքն:

Լ. Մ. Ալեքսանդր, L. M. Alexander

191 Front st. Worcester Mass.

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կոմ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստօֆիսին Station E (Եֆ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

BUSH & CO.
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Պ Շ Ո Ւ Շ Ե Ւ Ը Ն Կ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և
չափաւոր գնով

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՐՈՐԾ

286, 77. Էդլինհու Նիւ Եորք
267 և 277. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

Յակոր Էքիզեան Կարապետ Էքիզեան
30 Eddy Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston Mass.

ԵՂԱԳՐՈՐԾ ԵՒ ԻՐԻՈՒՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան
Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նա-
հանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու
տուներու շահերն միևնոյն տան վեբաբե-
րելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց
գրամատանց միոյն հետ համաձայնութիւն
մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմե-
րն ստակի փոխադրութեան գներուն բա-
ւական տարբերութիւն մը ձեռք բերած
ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ա-
մենէն վար գներով ստակի փոխադրու-
թիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուր-
քիոյ կողմերն: Անոնք որ կը կարօտին ըս-
տակ ղրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս,
Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալա-
թիա, Բալու, Ալին, Արաբիեր, Չիմիզկէզէկ,
Չունքուչ, ընդհանուր չըջականերովն,
պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց
հասցէներուն, որով իրենց փափաքանաց
համեմատ պիտի ստանան անմիջապէս ի-
րենց փոխանակագրերն ամենէն գոհացու-
ցիչ կերպով, և փոխարէնը պիտի գան-
ձուին առանց դժուարութեան և առանց
որ և է ծախքի մի հարկ ունենալու:

«ՀԱՅՔ»

Թղթակազմ

Ա. տարի 1 տողար 50 սէնթ կամ 7 Փր. 50ս.
Բ. տարի 2 տողար կամ 10 Փրանք

ԲԺԻՇԿ ԿՈՆԻԿՈՎ

Պատիւ ունի յայտարարել Պոսթընի
Հայ Հասարակութեան, որ ինքն բժշկա-
կան ուսումն աւարտած լինելով Զուիցե-
րիոյ մէջ և ժամանակ մի Փարիզ բժշկու-
անելէն յետոյ եկած Ամերիկայ և Պոսթըն
Հաստատուած է, շան հմուտ է վարակիչ
ախտեր բժշկելու մէջ, ու իր պաշտօնա-
տեղին կը գտնուի

361 Harrison Avenue

Office hours; 8—10 A. M. 1—3 & 5—7 P. M.

Ո՛ Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր
ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկ-
ներ, և ձեր բանին կուգան իմ գներս: Իմ
անունս Լաչանս է, և խանութս կը գըտ-
նուի Ֆրոնթ սթրիթի 60 Նիւմէքս: Մի-
այն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ:
Ո՛վ որ կ'ուզէ չխաբուիլ և չունչը չհատ-
ցունել գին կտրելու համար, և ո՛վ որ
չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ
և իմ ընտիր կօշիկներն փորձէ:

T. LACHANCE, կօշկավաճառ
60 Front St. Worcester, Mass.

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հա-
ւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն
հարստահարութեանց և Դրան հակահայ
քաղաքականութեան ահաւոր նկարագիրն
և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգա-
յին շարժմանց առաջնորդողի մի փորձա-
ռութեան և ձգտմանց չըջափոխութիւնն:
Գին 20 սէնթ կամ մէկ Փրանք:

«ԽՐԻՄԵՍՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական
տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հան
դերձ պատուական և լաւ յաջողեալ
պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ
կամ 50 սանթիմ:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21
դաս 16 պատկերօք և յաւելուածով ազ-
գային ու օտար հատընտիր ընթերց-
ուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէ
եանի, 1891, գին 1 թալէն կամ 5 Փրանք:

Պատիւ ունինք ծառայեցանել արգոյ Հայ հասարակութեան թէ առանց քարի, և միայն զամայն մաքուր ու ընտիր պուլիզուր կը վաճառենք, փառնուր 8 սէնթի միայն, փութով հըրամաններն կը կատարուին միայն ամոնց որք կամելի կը վճարեն:

Նիւ Եորքի եւ Ճէրզիի Հայերն եթէ 25 փառնուրէ աւելի գնելու լինին փոխադրութեան ծախքը մենք յանձն կառնուինք վճարել: Իսկ ուրիշ քաղաքաց մեր յաճախորդներն առնուազն 50 փառնուր գնելու եմ փոխադրութեան ծախքէ ազատ մնալու համար:

Փորձեցէք մեզ և գոհ պիտի ըլլաք:

S. HAUVSEPIAN
PALISADE AVE.
JERSEY CITY HEIGHTS, N. J.

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱՂԳԵՅԻՆ ՓՈԽԵԴԵՐՁ

ԿԵՆԱՑ ԵՊԵՆՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէո, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդը կ'ընդունին հազար թալէո, եթէ պայմանն հազար թալէոն է, կամ մինչև հինգ հազար թալէո, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէոն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ:

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է 385 Մէյն Փողոց, Ուուսթըր, 385 Main St. Worcester, Mass.

C. F. RANDALL

177 Front ST.

Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արգոյ Հայ հասարակութեան թէ իմ վերայիշեալ խանութին մէջ կօշիկներ և ըւլլերներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ Հայ հաճախորդաց:

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և Միւլթըն Մէյն Գին ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանքով Ձերդ Բանտօլ

THE WORCESTER MECHANICS
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷԳԵՆԻԻՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԵՆԻ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերայիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբեր կէսէն հաշուելով:

ԾԱԽՈՒ ԱՐՄՈՆԻԿ

Տաճկաստանէն գալած ամենաընտիր և խիստ ախորժելի ձայն ունեցող մանաւանդ Արեւելեան եղանակներու ներդաշնակ՝ նոր Արմօնիկ մը ունիմ զոր ծախելու մտադիր եմ, որոյ համար լաւ տեղեկութիւն և գինը հասկնալ ուզող անձինք թող թղթակցին սա հասցէով:

KRIKOR

643 BOX P. O.
olneyville, R. I.

HOPKINS & ATKINS
PATENTS Washington, D.C. 20
years' experience
write for information

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ . Ս . Գ Ա Ք Ր Ի Է Լ Ե Ա Ն